

Speed of light  
is constant in all  
frames of reference

$$\frac{91(07)}{V=73}$$

1934

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ VII ԽՄՔԱԿՆԵՐԻ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ա Ն Դ Ր Կ Ո Վ Կ Ա Ս

91(07)  
5-73


91(07)  
5-23  
3

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ VII ԽՄԲԱԿՆԵՐԻ  
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ա Ն Դ Ր Կ Ո Վ Կ Ա Ս

181  
181 37  
5014



Անդրկովկասի աշխարհագրութեան ծրագիրը կազմել և Լ.Ժ.Կ-ի ծրագրամեթոդական Կայանի աշխարհագրութեան սեկցիային կից բրիգադը, վորի կազմի մեջ են մտնում՝ Հ. Հովհաննիսյան, Ս. Բերբերյան (նախագահ) և Ս. Ոհանյան:

\*\*\*

Ներկա ծրագիրը, վորպես Անդրկովկասի աշխարհագրութեան ծրագրի առաջին փորձ, հնարավոր և, վոր ունենա եյական թերություններ և բացեր:

Յնդրում ենք աշխարհագրություն ավանդող ուսուցիչներին և այդ ուղղութեամբ աշխատող ընկերներին՝ ծրագրի առանձին թերությունների և բացերի մասին յեղած դիտողություններն ուղարկել մեզ (Լ.Ժ.Կ-ի ԾՄԿ-ի աշխարհագրական սեկցիա-Ալլահվերդյան № 11), վորպեսզի հաջորդ հրատարակությունների ժամանակ վերացվեն նկատված բացերը:

Դեգվ. ր մր. Ս. Աստամյան Սրբազրեց Գար. Հակոբյան

Գլավիտ N 2800, հրատ. № 8385, պատ. № 54, տիրած 500,  
հանձնված և արտադր. 7I 1934թ., ստորագրված և տպագր. 13II 1934 թ.  
Գետերատի տպարան, Յերևան:

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասի աշխարհագրութիւնը, վոր մեր դպրոցներում առաջին անգամն է զբովում այսպիսի ծավալով, պետք է լրիվ արտացոլի վողջ Անդրկովկասի՝ վորպէս միասնական տնտեսական ռայոնի, նույնպէս և նրա միկրոռայոնների, սուանձին հանրապետութիւնների ժող. տնտեսութեան զարգացման ետապները՝ մինչ հեղափոխութիւնը, հեղափոխութիւնից հետո մինչև ներկա շրջանը և հետագա զարգացման հեռանկարները:

Ծրագիրը կազմված է բավականաչափ ընդարձակ մանրամասնութեամբ, վորպէսզի ուսուցիչն իր ձեռքի տակ ունենա մեր տնտեսութեան բազմակողմանի բնագավառներն ընդգրկող անհրաժեշտ տեղեկութիւններ և նշումներ:

Ծրագիրը կազմված է հետևյալ ձևով.—Անդրկովկասի, վորպէս մի ամբողջութեան ժող. տնտեսութեան տարբեր բնագավառների ընդհանուր և ապա առանձին հանրապետութիւնների ժող. տնտեսութեան զարգացման մանրամասն ուսումնասիրման հիման վրա:

(Ազուայակը տես հաջորդ էջը)

Ժամերը բաշխվում են հետևյալ կերպ.—

1. Ներածութիւն	1 ժ.
2. Ֆիզիկո—աշխարհագր. պատմական տեսութիւններ և ազգաբնակ.	4 »
3. Անդրկովկասի արդյունաբերութիւնը	6 »
4. « » ժող. տնտեսակ. կոմպլեքսները	1 »
5. « » գյուղատնտեսութիւնը	6 »
6. « » տրանսպորտը	6 »
7. Ագրբեջանի ՍՍՀ	5. »
8. Վրաստանի ՍՍՀ	5. »
9. Հայաստանի ՍՍՀ	9. »
10. Յեզրափակում	1. »

Ընդամենը 40 ժամ

Պետք է խիստ կերպով անուանորդվել մատնանշած ժամերի բաշխմամբ: Առայժմ մենք չենք կարող նշել մեր այս ծրագրին համապատասխանող ձեռնարկ. դրա փոխարեն ծրագրի վերջում տրված են այն հիմնական և ոժանդակ աղբյուրները, վորոնցից ուսուցիչը կարող է քաղել բավականին հարուստ նյութեր՝ Անդրկովկասի աշխարհագրութեան մասին:

## ԱՆԴՐԿՈՎԿԱՍ

(40 ժամ)

Անդրկովկասը վորպես միասնական տնտեսական ուսյուն իՍՀՄ-ի ժող. տնտեսութեան սիստեմում: ԱՍՖԽՀ-ի տնտեսութեան ճյուղային կառուցվածքի մեջ կատարված փոփոխութիւնները, վորի հետևանքով ինքնուրուիւն Անդրկովկասը նախկին ազրարային-ինքուստրիալ յերկրից այժմ վերածվել է ինքուստրիալ-ազրարային յերկրի: Անդրկովկասի ժող. տնտեսութիւնը ներկայումս և նրա զարգացման գլխավոր ուղիները յերկրորդ հնգամյակում:

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՍԱՀ-ՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԼԻՄԱՆ

Թյուրքիայի և Պարսկաստանի հետ ունեցած սահմանի ստրատեգիական և տնտեսական գնահատականը. ռելյեֆը: Մեծ Կովկասյան լեռնաշղթան և նրա հարևան լեռնաշղթաները: Գազաթները: Գլխավոր լեռնանցքները (Խազի, Մամիսոնի և այլն): Փոքր Կովկաս և նրա ծայրային լեռնաշղթաները: Սուրամի և Թալիշի լեռները: Անդրկովկասի կենտրոնական հրաբխային շրջանի լեռնաշղթաները: Սեյսմիկ յերևույթներ: Անդրկովկասի բարձրավանդակները (տափաստանային, Ախալքալաքի, Հարաբաղի, Լենինականի և այլն):

Անդրկովկասի հարթությունները— Ծալկայի, Լոռու դաշտը, Արարատյան դաշտը, Ալազանի, Գորու հարթությունները:

Անդրկովկասի դաշտավայրերը (Մերձ Կասպյան, — սրա մասերը՝ Մուղանի, Շիրվանի, Ղարաբաղի և այլն, Սև ծովյան դաշտավայրը— սրա մասերը՝ Աբխազիայի, Սամուրգալանի, Մինգրեհայի և այլն):

Անդրկովկասի ծովերը— Սև և Կասպից. սրանց կլիմայական նշանակութիւնը և գնահատումը նավագնացութեան և արդյունաբերութեան տեսակետից:

Անդրկովկասի գետերը. սրանց ընդհանուր բնութագիրը. Գուռն իր վտակներով, Արաքսն իր վտակներով, Ռիոն, Բզիբ, Կոզոր, Ինգուր, Սուբսա, Ճորոխ և այլն: Անդրկովկասի գետերի գնահատականը՝ եներգետիկայի, նավագնացութեան և վոռոգման տեսակետից:

Անդրկովկասի լճերը. սրանց ծագումը (պտոնեչային, մնացորդային լճեր և այլն): Սևանա լիճը, Տարսիսլուրի, Փարվանա, Թումանգյուլ, Խոզաբիէ, Արփա, Պալեոստոմ, Ախչալա լճերը և այլն. սրանց գնահատականը՝ նավագնացութեան, եներգետիկայի և վոռոգման տեսակետից:

Անդրկովկասի կլիման. քամիների, ջերմութեան և մթնոլորտային տեղումների բաշխումն Անդրկովկասում. ծովերի և լեռնաշղթաների կլիմայական ազդեցութիւնը. կլիմայական տարբերութիւններն Անդրկովկասի ներսում՝ Սև ծովի ափի խոնավ, մերձարևադարձային կլիման, Ազրբեջանի դաշտավայրի չորային Արալո-Կասպիական տիպի կլիման,

հայկական լեռնաշխարհի ցամաքային լեռնային կլիման: Ուղղահայաց կլիմայական գոնաները:

Անդրկովկասի հողաբուսական տարբերութիւնները: Ուղղահայաց հողային գոնաները, Ուղղահայաց բուսական գոտիները: Անդրկովկասի անտառները. Ալպյան արոտավայրերը: Անդրկովկասի կենդանական աշխարհը: Անդրկովկասի ոգտակար հանածոները՝ նավթ, մարգանեց, քարածուխ, յերկաթ, գունավոր մետաղներ, քիմիական հումք, հանքային ջրեր և այլն. սրանց աշխարհագրութիւնը:

### ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅՅՍՒԼԸ

Ճեղղալիզմն Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում: Անդրկովկասի քաղաքական և տնտեսական անդամահատվածութիւնը 18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում՝ ռուսական տիրապետութեան նախորդային (Իմերթիա, Գուրիա, Կախեթիա, Մինգրելիա, Քարթալինիա, Բազլի, Գյանջայի, Յերևանի խանութիւնները և այլն): Անդրկովկասի գրավումը ռուսների կողմից: Անդրկովկասը վորպես ցարական Ռուսաստանի գաղութ: Ցարական Ռուսաստանի գաղութային քաղաքականութիւնը վորպես Անդրկովկասի տնտեսական հետամնացութեան պատճառ: Լենինի տված բնութագիրը (հատոր 17-րդ, մասն 1-ին, էջ 200): Փետրվարյան հեղափոխութիւնը, Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և, բուրժուա-ազգայնական հանրապետութիւնների ստեղծումն Անդրկովկասում: Անդրկովկասի մինչհեղափոխական շրջանի արդյունա-

բերութեան սաղմային բնութիւնը և գյուղատնտեսութեան կիսանատուրալ ձևերը: Ֆեոդալական ճորտատիրական մնացորդներն Անդրկովկասի սոցիալական արտադրական հարաբերություններին մեջ և նրանց՝ արտադրողական ուժերի զարգացումը կաշկանդող դերը: Ցանքսային տարածութեան բաշխումը հացահատիկային մշակութիւնների (90%) և տեխնիկական բույսերի (8 %) միջև: Անասնապահական, քոչվոր և կիսաքոչվոր, արխայիկ, եկատենսիվ ձևերը: Անդրկովկասի տրանսպորտային տնտեսութեան, գերազանցորեն ստարտեգիկ, նվաճողական նպատակները: Անդրկովկասյան ժողովրդների նկատմամբ վարվող ռուսիֆիկատորական քաղաքականութիւնը և լայն զանգվածների համատարած անգրագիտութիւնը:

Ազգային բուրժուական կառավարութիւնների ժամանակաշրջանում Անդրկովկասը վորպես ազգամիջյան պատերազմների ռազմաբեմ և անցյալում գոյութիւն ունեցող տնտեսութեան դեգրացացիան:

Անդրկովկասի Ֆեդերացիայի կազմակերպումը և նրա տնտեսական ու քաղաքական նշանակութիւնը:

## ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՊԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Անդրկովկասի բազմազգի բնակչութիւնը, նրա պատմական պատճառները: Անդրկովկասի հիմնական ազգերը (վրացիներ, հայեր, թուրքեր): Մյուս ազգութիւնները (ռուսներ, ջրդեր, թաթարներ, թալիշներ, գերմանացիներ, հույներ և այլն): Ազգաբնակչութեան խտութիւնը, սոցիալական, պրո-

Ֆեոդոնալ և ազգային կազմը, դյուղի և քաղաքի բնակչութիւնն Անդրկովկասում և նրա մեջ մտնող հանրապետութիւններում՝ առանձին առանձին:

ԱՍՖԽՀ-ի կազմը՝ Վրաստանի ՍԽՀ (վորի մեջ մտնում են Աբխազիայի ԻՍԽՀ, Հյուսիսային Ոսեթիայի ԻՇ և Աջարստանի ԻՍԽՀ), Ադրբեջանի ՍԽՀ (Լեռնային Ղարաբաղի ԻՄ, Նախիջևանի ՍԽՀ) և Հայաստանի ՍԽՀ: Անդրկովկասի գլխավոր քաղաքները՝ Թիֆլիզ, Բազու, Յերևան, Գութային, Բաթում, Սուխում, Գյանջա, Լենինական, Նախիջևան:

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

### (ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ)

Անդրկովկասի մինչխորհրդային արդյունաբերութեան համառոտ նկարագիրը: Խորհրդայնացումից հետո Անդրկովկասի տնտեսութեան վերականգնումը և սոցիալիստական ունենատրուկցիան,

Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացումը՝ կապված բնական հարստութիւնների վերհանման հետ: Բնական հարստութիւնների ուսումնասիրվածութեան խիստ ցածր աստիճանը մինչ Հոկտեմբերյան հեղափոխութիւնը և այդ հարցի արդի վիճակը:

«Արդյունաբերութեան զարգացման բարձր տեմպերը (ԽՍՀՄ-ի միջին տեմպերի համեմատութեամբ) և դրա պատմական խոշոր քաղաքական ու տնտեսական նշանակութիւնը Անդրկովկասյան հանրապետութիւնների՝ ցարիզմից ժառանգած

տնտեսական և կուլտուրական հետամնացութիւնը վերացնելու ասպարիզում վորպես գործնական ապացույց լենինյան ազգային քաղաքականութեան դադափարներին և սկզբունքներին հաղթանակի՝ նախ-կին ազրարային, գաղութային ծայրամասերում»:

### ԱՍՑԽՀ-Ի ԵՆԵՐԳԵՏԻԿԱՆ

Լենինի նամակը Կովկասի կոմունիստներին: ԱՍՑԽՀ-ի եներգետիկ ռեսուրսները. — «սպիտակ ածուխ», նավթ, քարածուխ, լիգնիտ, տորֆ, այրվող գազեր և այրվող թերթաքարեր, փայտ և այլն: Նրանց աշխարհագրութիւնը և պաշարները: Անդր-կովկասի գետերի տարեկան միջին եներգետիկ կարողութիւնը, Ջրային ռեսուրսների եներգետիկ ոգտագործման պրոբլեմն Անդրկովկասում տրվում է վոչ թե անջատ, այլ կոմպլեքսային ձևով՝ կապակցված յերկրի վոռոգման խնդիրների հետ:

Ոռչորագույն եներգետիկ իրրիզացիոն պրոբլեմները—Սեւան-Չանգու, Մինգեչաուր, Սրամ թարթառ, Քուռ, Արաքս և այլն: Անդրկովկասի ելեկտրոկայանների փնջացումը և փնջացման կապը Հյուսիսային Կովկասի, դրանով և ՈՍՀՄ-ի ելեկտրոկայանների հետ: Եներգետիկայի ծանրութեան կենտրոնի տեղափոխումը հեղուկ վառելանյութից Ջրային ռեսուրսների ոգտագործման վրա:

Առաջին հնգամյակի ելեկտրիֆիկացիայի ծրագրի ավարտումը և յերկրորդ հնգամյակի վերջում գործող ելեկտրոկայանների ցանցը (Չագես, Ռիոնգես, Չորագես, Քանաքեռգես, Ածգես, Սրամգես): Տկվարչելի ջերմային ելեկտրոկայանը, Գյանջայի,

Թարթարի, Մինգեչաուրի, Այազանի հիդրոէլեկտրոկայանները, Սեւան-Չանգուի կասազը, Բազմլընդարձակված ջերմակայանները և այլն:

### ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՃՅՈՒՂԵՐԸ

1. Նավթ. Նավթի արդյունաբերութեան դերը և տեղը ՈՍՀՄ-ի և Անդրկովկասի ժող. տնտեսութեան մեջ: Անդրկովկասի նավթի պաշարները (Միութեան պաշարների 50 %-ից ավելին և աշխարհի նավթի պաշարի 20 %-ը): Նրա առաջատար դերը ԱՍՑԽՀ-ի արդյունաբերութեան մեջ: Նավթի արդյունաբերութեան հետ կապված արդյունաբերական այլ ճյուղեր (քիմիական, մետալուրգիական և այլն): Նավթահորերի փորումը, նավթի արտագրանջը և նավթի մշակումն ըստ տարիների: Առաջին հնգամյակի կատարումը  $2\frac{1}{2}$  տարում: Նավթային արդյունաբերութեան նոր ուսյոնների զարգացումը Ադրբեյջանի ՍՈՀ և Վրաստանի ՍՈՀ-ի մեջ: (Շիրակ, Գուրի և այլն): Այս վերջինների հեռանկարները յերկրորդ հնգամյակում: Նավթամուղների, նավթաթորման և կրեկինգ գործարանների կառուցումը: Նավթի արտահանումը: Նավթի արդյունաբերութիւնը յերկրորդ հնգամյակում:

2. Քարածխի արդյունաբերութիւնը. Անդր-կովկասի քարածխի հանքավայրերը, նրանց պաշարները և փորակը: Քարածխային արդյունաբերութեան զարգացումը, հնգամյա պլանը և նրա կատարումը: Յերկրորդ հնգամյակի վերջում քարածխի և կոկսի պահանջը: Տկվարչելի քարածխային ավազանը վորպես Անդրկովկասի և կերչի մետալուրգիայի բազա:

3. Մարգանեցի արդյունաբերությունը. Մարգանեցի արդյունաբերության նշանակությունը և դերը ԽՍՀՄ-ի ժող. տնտեսության մեջ: Վրաստանի մարգանեցի պաշարները: Մարգանեցի արդյունաբերությունը մինչև 1921 թ. Հարբիմանի կոնցեսիայի շրջանում և կոնցեսիայի վերացումից հետո: Մարգանեցի արդյունաբերության մեքենայացումը: Մարգանեցի արդյունաբերության պլանը և նրա կատարումը: Յերկրորդ հնգամյակի հեռանկարները: Վրաստանի մարգանեցի տեսակարար կշիռը համաշխարհային շուկայում:

4. Պղնձի արդյունաբերությունը. Անդրկովկասի պղնձի հանքավայրերը, պաշարները և հանքի վորակը: Անդրկովկասի պղնձի արդյունաբերական ուսյոնները մինչև խորհրդայնացումը: Անդրկովկասի պղնձի արդյունաբերության զարգացումը: Տեսակարար կշիռը ԽՍՀՄ-ի ժող. տնտեսության մեջ: Պղնձի արդյունաբերության առաջին հնգամյա պլանը, նրա կատարումը: Պղնձի արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակում: Պղնձի հետ կապված այլ գունավոր մետաղների (մոլիբդեն, ցինկ, կապար) արդյունաբերությունը յերկրորդ հնգամյակում և նրա հումքային բազան:

5. Սել մետալուրգիա. Անդրկովկասի յերկաթահանքերի պաշարը. Դաչքեսանի և Չատախի հանքավայրերը. Սև ծովի ափին մագնիսային ավազանները: Գյանջայի և Ոչեմչիբի ծրագրվող մետալուրգիական գործարանները: Չեստաֆոնի Փերրոմանդանի և Փերրոձուլման (Փերրոսիլիցիումի, Փերրոխրոմի, Փերրոմոլիբդենի, մանգանպողպատի) արդյունաբերությունը և նրա ենթագետիկ ու

հումքային բազաները (Քուրդստանի և Հայաստանի խրոմերկաթը, Ագարակի և Վերին Ռաջայի մոլիբդենը): Չարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

6. Ալյումինի արդյունաբերություն. Չագիլիկ ալյունիտները վորպես հումքային բազա՝ ալյումինիումի ոքսիդի, մետաղային ալյումինի, ծծմբային թթվի և կալիոնի աղերի արդյունաբերության համար:

7. Քիմիական արդյունաբերություն. Քիմիական արդյունաբերության բազան (եթան ելեկտրոներգիա, հանքային հումք, նավթի և սև ու գունավոր մետալուրգիայի մնացորդներ): Սինթետիկ կաուչուկի, կարբիդի, յոդի, բրոմի, ցիանամիդի, սուպերֆոսֆատի, ծծմբային թթվի, սոդայի և այլ քիմիական նյութերի արդյունաբերություն: Չարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

8. Մեքենաշինարարություն. Մեքենաշինարարությունը զարգանում է հետևյալ գծերով. —

- ա) գյուղատնտեսական մեքենաշինարարություն,
- բ. մեքենաներ՝ մելիորացիայի համար,
- գ) մեքենաներ մետաքսագործության, թեյի տնտեսության, գինեգործության և կոնսերվի արդյունաբերության համար,
- դ) մեքենաշինարարություն լեռնային արդյունաբերության համար,
- ե) ելեկտրոմոտորների արտադրություն,
- զ) կարել,
- է) ավտո-արանսպորտային սարքավորման և ճանտրանսային շինարարության համար:

Չարգացման հեռանկարները յերկրորդ հընգամ յակում:

9. Եինարարական նյութերի արդյունաբերություն. Տուֆ, պեմզա, մարմար, ցեմենտ, հրակայուն, կավեր, ինֆուզորիա, լիտոգրաֆիկ քար, անդեզիտ, այդ ճյուղերից յուրաքանչյուրի ուսուցանները. պաշարները. արտադրանքը և տեսակարար կշիռը: Չարգացման հեռանկարները յերկրորդ հընգամ յակում:

10. Անտառային արդյունաբերություն. Բզիբի անտառաթղթի կոմբինատը, Ինգուրի թղթի կոմբինատը և Ախմեդի նոր կոմբինատը: Փայտածալման գործարաններ: Կահույքի գործարաններ: Չարգացման հեռանկարները յերկրորդ հընգամ յակում:

11. Թեթեվ և սննդի արդյունաբերություն. Գյուղատնտեսական հումքի ուսուցաններում թեթև և հումքային արդյունաբերության զարգացումը: Տեքստիլ արդյունաբերությունը: Հների սեկտորում ստեղծարանների կառուցումը: Մետաքսի արդյունաբերությունը և արհեստական մետաքսի արդյունաբերության ձեռնարկումը:

Կաշվի, կոշիկեղենի, ապակու, պոլիգրամֆ և այլ արդյունաբերական ճյուղեր: Մանդի արդյունաբերությունը և նրա ծավալումը (կոնսերվի, ձեթի, ալյուրի, շաքարի, ոճառի, ծխախոտի, պափրի և այլն): Թեթև արդյունաբերության զարգացման հեռանկարները յերկրորդ հընգամ յակում:

Տնայնագործությունը ԱՖՍՀ-ում: Նրա աշխարհագրությունը, անցյալը, ներկան և զարգացման հեռանկարները յերկրորդ հընգամ յակում:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՈՄԲԻՆԱՏՆԵՐԸ ՅԵՎ ԺՈՂՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՄԵՆՏՆԵՐԸ

1. Բազվի նավթա-գազա-ֆիմիական կոմբինատ. Բազվի շերմային և Ազրբեջանի շրակենտրոնական երկտրոնկայանների փնջի բազայի վրա ծավալում է նավթի, գազերի և քիմիական արդյունաբերությունը: Կոմբինատն ընդգրկում է նաև մետալուրգիական շինանյութերի և սննդի արդյունաբերության մի շարք նյութեր:

2. Գյանջայի մետալուրգո-ֆիմիական կոմբինատ. Ազրբեջանի հիդրո-ցենտրալների բազայի վրա (վրացական և հայկական փունջերի հետ կապակցված) ծավալում է հզոր մետալուրգիական-քիմիական կոմբինատը, վորի հումույթն են հանդիսանում Դաշքեսանի մադնիսային յերկաթահանքը և Չադլիկի ալյունիտները: Կոմբինատին հարակից արդյունաբերության կարևոր ճյուղերն են հանդիսանում՝ տեքստիլի, գունավոր մետաղների, շինանյութերի և սննդի արդյունաբերությունը:

3. Նախիջևանի արդյունաբերության շրջանը. Ծավալվում է կապարի, ցինկի և աղի արդյունահանումը, տեքստիլի (մետաքս), կաշու, սննդի, և կոնսերվի արդյունաբերությունը:

4. Քուրայիս-ձիռնի ֆիմիական մետալուրգիական կոմբինատ. Ռիռնի հիդրո-ցենտրալի և Տկվիրուլի քարածխի բազայի վրա ծավալվում է ենթգիտ-արդյունաբերական կոմբինատը (Չետաֆոնի): ընդգրկում է էլեկտրոձուլում, ֆերրոձուլվածքները, ծրագրվում է մետաղային ալյումինի արտադրությունը: Չարգացվելու յեն քիմիական պարարտանյութերի, Կթիլի (Ինգուրի, կարբիդի

155  
11979  
75621  
3014  
7102

մետաքսի (արհեստական և չերամ) և սննդի արդյունաբերութիւնը:

5. Թիֆլիզի կոմպլեքս (Գորու-Հարավ-Ոստ-թիայի յենթառայոններով). Հենվում է Վրաստանի հիդրոցենտրալների վրա. զարգացնում է լեռնարդյունաբերութեան, շինանյութերի, մետաքսի արդյունաբերութեան, ճանապարհի մեքենաշինարարութիւնը: Քիմիական գունավոր մետաղների, շինանյութերի և սննդի արդյունաբերութիւնը: արբանսպորտային հանգուցակետ և հիմնական մագիստրալ գծերի ելեկտրիֆիկացիա:

6. Աբխազիայի կոմպլեքսի Տկվարչելիի մետալուրգիական կոմբինատի հետ միասին. Հենվում է Տկվարչելիի ջերմային ելեկտրակայանի և Կոզորգեսի վրա: Տկվարչելիի քարածխային-մետալուրգիական (Ոչեմչիրի) և Բզիբի անտառաթղթի կոմբինատներ, ինչպէս նաև քիմիական, տեքստիլի և սննդի արդյունաբերութիւնը:

7. Աջարստանի արդ. ուսյուն. Բաթումի նավթաթորման գործարանները, կոչկեղենի արտադրութիւնը, թէյի և փայտամշակման գործաշաններ:

8. Եիրակի ուսյուն: Այստեղ ծավալվում է նավթի և պղնձի արդյունաբերութիւնը:

9. Յերեվան-Չանգու եներգո-ֆիմիական կոմբինատ. Հենվում է Սեան-Չանգու կասկաղի հիդրոցենտրալների վրա, յերկրորդ հնդամյակում ծավալվում է սինթետիկ կաուչուկի, կարբիդի, ալյումինի, մետաղամշակման շինանյութերի և սննդի արդյունաբերութիւնը:

10. Ալլահվերդի-Ղարաֆիլիսայի ֆիմիական մետալուրգիական կոմբինատ. Հենվում է Չորագեսի ենրեզիայի, Ալլահվերդու պղնձի և ներմուծվող

նյութերի ոգտադործման վրա: Գունավոր մետաղների (պղինձ, ցինկ, կապար և այլն), քիմիական պարարտանյութերի արդյունաբերութիւնը:

11. Լենինականի արդյունաբերական ուսյուն. Տեքստիլի, սննդի, քարածխի (Չաջուռ), շինանյութերի (տուֆ, պեմզա) արդյունաբերութիւնը:

12. Չանգեգուր-Մեղրի արդյունաբերական ուսյուն: Պղնձի (իջնպես նաև մոլիբդենի, ցինկի և կապարի) արդյունաբերութիւն. պղնձի ձուլման և ֆլատացիոն գործարաններ: Պղնձի նոր հանքավայրեր (Ագարակ և այլն): Կոնսերվի արդյունաբերութիւնը:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԱՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսութիւնը մինչև խորհրդայնացումը (հողատիրութիւն, հողոգտադործում և դաշտավարութիւն). հողային հարցը և նրա լուծումը խորհրդայնացումից հետո:

1. Սոցիալիստական սեկտորի հաղթանակը և նրա առաջատար դերը:

2. Բերքատվութեան բարձրացումն ուղղութեան կենտրոնում:

ա) Մելիորացիա

Իրրիզացիայի և չորացման նշանակութիւնը ԱՍՖՅՆՀ հողագործութեան զարգացման համար:

Գլխավոր իրրիզացիոն և չորացման աշխատանքները մինչև խորհրդայնացումը և խորհրդայնացումից հետո: Լենինի նամակը՝ ուղղված Անդր-կովկասի կոմունիստներին 1920 թ.: Նոր հողամա-

սերի աճումը և նրանց չորացումը՝ Անդրկովկասի տարրերը ուսյուններում:

Անդրկովկասի ջրային տնտեսութեան առաջին հնգամյա պլանը և նրա կատարումը: Յերկրորդ հնգամյակի մելիորացիայի պրոբլեմը և մաշտարները: Կոլխիդայի և այլ ճահիճների չորացման պրոբլեմը: Վոտոզման պրոբլեմի կապը ելեկտրիֆիկացիայի հետ: Մինդեչաուրի, Սեանի, Թարթարի, Սամազուրի, Գուռ - Արաքսի և այլ կոմպլեքսների պրոբլեմը:

բ) Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը

ԱՍՖՈՆՀ-ի հանրապետութեան մեծ քանակությամբ տրակտորային պարկի կարողութեանը և մեքենատրակտորային կայանների կազմակերպումը: Կոլեկտիվացումն ու նրա գինամիկան Անդրկովկասում: Պորհրդային տնտեսութեան շինարարութեանը. ելեկտրիֆիկացիան գյուղատնտեսութեան մեջ: Գյուղատնտեսութեան քիմիկացիան և նրա ծավալումը: Ավտոմոբիլիզացիան գյուղատնտեսութեան ռեկոնստրուկցիայի գործում:

գ) Բուսաբուծութեան

Անդրկովկասի բուսաբուծութեան զարգացումը՝ թանկարժեք տեխնիկական և մերձարևադարձային մշակույթների, յայգեգործութեան և խողովամշակման գծով: Բամբակը, նրա մշակութեանն ու զարգացման ուսյունները: Անդրկովկասը վորպես Պորհրդային Միութեան յերկրորդ բամբակամշակման բազա: Թեյի մշակութեան ծավալումը: Յերկրորդ հնգամյակում Անդրկովկասի թեյի արդյունաբերութեանը բավարարելու յե ԽՍՀՄ-ի թեյի պահանջը:

Ծխախոտ և նրա մշակութեան ուսյունները: Յուղաբեր (արախիս, քունջութ, սոյա), թելատու (ռամի, քենդիր, կենաֆ, կանեփ,) թթենի, շաքարի ճակնդեղ, դեղատու, եֆիրարբեր, կառուցուկատու և այլ տեխնիկական մշակույթներ, նրանց ցանքային տարածութեանների, բերքի և բերքատուութեան ղինամիկան:

Այգեգործութեան. խողովի և ցիտրուսային տունկերի մշակութեանը. նրանց ուսյունների, ծավալումը և աճող նշանակութեանն ԱՍՖՈՆՀ-ի ժողտնտեսութեան մեջ: Բանջարանոցներ և բոստաններ: Յանովի խոտեր:

Տեխնիկական մերձարևադարձային կուլտուրաների, այգեգործութեան և խողովի մշակութեան առաջին հնգամյակի պլանը և նրա կատարումը: Յերկրորդ հնգամյակում դրանց զարգացման հեռանկարները:

Հացահատիկային կուլտուրաները: Դաշտավայրութեան սիստեմներն Անդրկովկասում: Հացահատիկային կուլտուրաների ցանքային տարածութեանների ղինամիկան: Անդրկովկասի իբրև սպառող հացահատիկային ուսյուն: Անդրկովկասի հացաֆուրաժի բալանսը: Հացահատիկային կուլտուրաների զարգացման առաջին հնգամյա պլանը և նրա կատարումը: Բերքատուութեան բարձրացման պրոբլեմը:

Պորհտնտեսական և կուլտնտեսական շինարարութեանն առաջին հնգամյակում և զարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում: Կարեւորագույն գյուղատնտեսական կուլտուրաների զարգացումը յերկրորդ հնգամյակում:

Անդրկովկասի անասնապահութեան զարգացման բնութագիրն անցյալում և ներկայում. նրա հատուկ նշանակութիւնը: Անասունների քանակական կազմը: Նրանց վորակը: Քանակի կրճատումը 1920-30 թթ. վորպես կուլակային տարրերի դասակարգային պայքարի արտահայտութիւն: Պրոդուկտիվ և բանոց անասուն: Անասնապահութեան պրոբլեմի լուծումը 'խոշոր' սոցիալիստական տնտեսութեան հիման վրա:

Անդրկովկասի արոտավայրերի հարցը: Նրանց ներկա վիճակը: Գյուղատնտեսութեան սոցիալիստական ռեկոնստրուկցիային խանգարող քոչվոր և կիսաքոչվոր անասնապահութեան լիկվիդացիայի պրոբլեմը:

Պրոդուկտիվ անասնապահութեան լայն ծավալումը, մասնավորապես կաթնատնտեսութեան և մսատու ու բրդատու վոչխարաբուծութեան՝ լայնացնելով ու վերակառուցելով կերի բազան: Անասունների քանակի և անասնապահական հումքի բազայի ծավալումը:

Անասնապահութեան ճյուղերը.— 1. խոշոր յեղջուրավոր կենդանիներ, 2. վոչխարաբուծութիւն, 3. խոզաբուծութիւն, 4. թռչնաբուծութիւն, 5. ձկնորսութիւն, 6. շերամապահութիւն, 7. մեղվաբուծութիւն: Այդ ճյուղերի ուսումնասիրող, զարգացման քանակական և վորակական ցուցանիշներն առաջին հնգամյակում և յերկրորդ հնգամյակի հեռանկարները:

Անդրֆեդերացիայի անտառի Փոնդը և նրա բաշխումն ըստ հանրապետութիւնների:

Անտառի բնութագիրն Անդրկովկասում: Ծառերի տեսակները և նրանց աշխարհագրական բաշխումն: Անտառի շահագործումը: Անտառային տնտեսութեան հնգամյա պլանը և նրա կատարումը: Անտառային շինարարութիւն: Վորսորդութիւն: Զարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

ԱՍՖՆ Հ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

ԱՍՖՆ Հ գյուղատնտեսութեան զարգացումը յերկրորդ հնգամյակում բնթանում է Անդրկովկասի գյուղատնտեսական շրջանների ավելի խորը մասնազիտացման գծով:

ԱՍՖՆ Հ-ի գյուղատնտեսական շրջանների սխեման.

1. Մերձարեւիկայի կուլտուրաների ուսումնասիրող, Ընդգրկում ա Աջարստանի, Աբխազիայի և Արեւմտյան Վրաստանի մերձարեւիկային շրջանները: Ընդգրկում է մասամբ կամ յբով Աջարստանի և Աբխազիայի բոլոր վարչական ուսումները և Արեւմտյան Վրաստանի հետեյալ շրջանները— Ողուրգեթի, Չախատաուրի, Լանչխուտի, Աբաշի, Մարափիլ, Սեւակի, Չուգչիդի, Սոբի, Յային-Ջիլի, Սոնի և Վանի: Այս ուսումներում մինչև վերջերը գերակշռում էր յեզիպտացորենը. յերկրորդ հնգամյակում հիմնական մշակույթներ են դառնալու սուբտրոպիկ. մշակույթները— թեյ, ուսմի, ծխախոտ, ցիտրուսային տնկարաններ (լիմոն, նարինջ, մանդարին):

Մերձարեւադարձային յերկրորդ ուսյունը բռնում է Թալիշի մերձծովյան և նախալեռնային մասերը, ընդգրկելով Լենքորանի, Աստարայի շրջանները և Մասսալայի շրջանի մի մասը:

2. Բամբակի ուսյուն. Ընդգրկում է մերձկասպյան դաշտավայրի չոր տափաստանները, Արաբատյան դաշտը, Քուռի ու Ալազանի հովիտները: Մեծ մասով այդ ուսյունը վտուցվում է: Տեղ-տեղ մտնում են այգեգործութայն և խաղողի մշակման դանդախներ (Գյանջա, Ղամարլու, Յերեւան, Քյուրդամիր):

3. Այգեգործակազ իսպողամշակման ուսյուն. Գրավում է Հարավային Անդրկովկասի, Գորու և Մուխրանի հովիտները, Մեծ Կովկասի նախալեռները (Նուխի, Չաքաթալա, Շամախի, Կուբա), տարածվում է Արևելյան Անդրկովկասի բոլոր գետերի վերին հովիտների վրա (բամբակի ուսյունից բարձր), Արևմտյան Անդրկովկասում ընդգրկում է Սամարեզի, Քութայիսի, Բաղգատի, Յագերի և Ռաչու շրջանները: Այս ուսյունում տեղ են բռնում սոյայի, արախիսի, ծխախոտի կուլտուրաները, մասամբ՝ շերամաղահումքային:

4. Անասնապահական ուսյուն. Գրավում է Մեծ Կովկասի հարավային ճյուղավորությունները և Փոքր Կովկասի լեռներն ու սարահարթերը (Աբխազիայի լեռնատանը, Սվանեթիան, Արևմտյան Վրաստանի լեռները, Հարավ Ոսեթիան, Կազբեկի ուսյունը, Պչավիան և Նեվսուրիան, լեռնային Թուրքեսթան, Նուխու, Չաքաթալայի, Շամախու և Կուբայի ուսյունների լեռնային մասերը, Քրդաստանը, Լեռնային Ղարաբաղը, Չանգեզուրը, Դա-

րալադյազը, Սևանի բարձրավանդակը, Լենինականի, Բաշկիչետի, Ախալքալաքի, Սուլի և Կեդի վարչանակ շրջանները:

5. ԱՍՖԽՀ-ի մերձադաշտային տնտեսություններ. Արդյունաբերական կենտրոնների շուրջ՝ Թիֆլիս, Բազու, Յերեվան, Քութայիս, Ճիատուրի, Քյուրդամիր, Լենքորան, Նախիջևան, Ալլահ-վերդի, Ղափան, Ղարաքիլիսա և այլն: Միաժամանակ կուրորտների շուրջը ծավալվում է մերձքաղաքային տնտեսություն (բանջարաբուծություն և կաթնատու անասնապահություն):

\*\*\*

### ԱՍՖԽՀ-ի ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կուրորտների բնութագրերը և կուրորտային շինարարությունն ըստ հանրապետությունների: Չարգացման հեռանկարները:

### ՏՐԱՆՍՊՈՐՏ

Տրանսպորտը վորպես սոցիալիստական ինդուստրացման որդանական մաս և գործող ու պոտենցիալ արտադրողական ուժերի զարգացման ախիվ գործուն: Յերկաթուղային շինարարությունը զարգացումն Անդրկովկասում: Յերկաթուղային ցանցը և նրա գլխավոր ցուցանիշները: Առաջին հնգամյա պլանի կատարումը: Նոր յերկաթուղազծային շինարարություն: Անդրկովկասից յերեք յերկաթուղազծային յելք գեպի հյուսիս. 1. ներկայումս գոյություն ունեցողը, 2. Սեծովյան յերկաթուղի, 3. լեռնանցքային (Գորի-Դար-Կոխ) յերկաթուղի:

Ալյաթ-Չուլֆա յերկաթգծի ավարտումը: Ազա-տափա-Յերեւան յերկաթգծի կառուցումը: Այս

վերջինը լեռնանցքային յերկաթգծի հետ կրճատում և Մոսկվա-Ջուրթա տարածությունը 1324 կիլ.: Կառուցվող յերկաթուղազծերի նշանակությունն Անդրկովկասի արտադրողական ուժերի զարգացման համար: Կառուցվող յերկրորդական գծերը— Գուլթայիս, Ծխալտոբա, Դաչքեսանի յերկաթուղազիծ, Յելենովկա— Նոր Բայազետ, Ղարաքիլիսա—Նիկիտինո: Անդրկովկասի յերկաթուղազծերի ելեկտրիֆիկացիան (Սուրամ և այլն):

Թյուրքիայի և Պարսկաստանի տրանզիտը ԱՍՖՆՀ-ի վրայով:

Անուելս Բանապարհներ. Անուելս ուղիների զլխավոր մագիստրալ գծերը: Առաջին հնգամյա պլանի կատարումը և զարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

Ծովային և ներքին ջրերի տրանսպորտ. Բաթումի, Բազվի և վյուս նավահանգիստների ընդարձակումը: Գործող և ներքին նոր ջրային ճանապարհները՝ Գուռ, Արաքս, Ռիոն, Ալազան գետերի վրա:

Ավտոտրանսպորտի արդի դրությունը և զարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

Ավիո հաղորդակցությունների զարգացումը յերկրորդ հնգամյակում:

Ժողկապ. Ժողկապի դրությունը: Ռադիո: Առաջին հնգամյա պլանի կատարումը և զարգացման հեռանկարները յերկրորդ հնգամյակում:

Ա. ԱԴԻԲԵՋԱՆԻ ՍԻՀ

Տարածությունը, դիրքը, սահմանները: Կազմը (Ղարաբաղի ԻՄ, Նախիջևանի ԻՍՍՀ) Փիզիկոաչ-

խարհագրական տեսություն: Բնակչություն: Տընտեսության պատմական համառոտ ակնարկ: Ազրբեջանն անցյալում վորպես ցարական Ռուսաստանին նավթ և բամբակ մատակարարող գաղութ՝ հեամմնաց գյուղատնտեսությամբ (քոչվոր անասնապահություն): ԱՍՍՀ տնտեսության վերելքը և նրա զարգացման փուլերը խորհրդայնացումից հետո: Արդյունաբերական արդի ճյուղերը և նրանց տես. կշիռը: Ներկայումս ծավալվող արդյունաբերական կոմբինատների ռայոնները:

Բազվի նավթա - գազա - ֆիմիական կոմբինատ. Բազվի ջերմային և Ազրբեջանի ջրակենտրոնական ելեկտրոկայանների փնջի բազայի վրա ծավալում է նավթի, գազերի, քիմիական (սոդա, ծծմբային թթու, քլոր, բրոմ և այլն), ցեմենտի, շինանյութերի, մետաղամշակման և թեթև արդյունաբերությունը, յենթառայոնները — Կուբա (չաքարի գործարան, կոնսերվ), Սալյան-Լենքորան ձկնարդյունաբերություն) Գյուրդամիր, Սաբիր-Աբադ (տեքստիլ բամբակագործական գործարան, գորգեր, ձեթ-ոճառ):

2. Դյալիչայի մետալուրգո-ֆիմիական կոմբինատ. Ազրբեջանի հիզրոցենտրալների բազայի վրա (վրացական և հայկական փնջերի հետ կապակցված) ծավալվում է հզոր մետալուրգիական կոմբինատ. Դաչքեսանի մագնիսային յերկաթահանքերի և Չազլիկի ալունիտների բազայի վրա եներգոքիմարդյունաբերական կոմբինատն արտադրելու յե չուգուն, յերկաթ և պողպատ, այլումինի ոքիսիդ, մետաղային ալյումին, ծծմբաթթու, կալիումի աղեր, սուպերֆոսֆատ, հանքային ներկեր, կոկսի արտադրություն, ցեմենտ, շինա-

նյութեր, ելեկտրոն և մետաղի արդյունաբերություն (խողովակներ) տեքստիլ և սննդի ու համեմատական արդյունաբերություն:

Յենթառայուններ.—1. Նուխի—Չաքաթալայզինձ (Բելոկանի), մետաքսի, կոնսերվի, մրգի, բանջարեղենի և կաթնատնտեսական արդյունաբերություն. 2. Լեոնային Ղարաբաղի յենթառայուն—ցինկ, կապար, մետաքս, բամբակագործություն, ձեթ — ոճառ, ալրաղաց, մրգի և բանջարեղենի պահածոների արդյունաբերություն, կաթնատնտեսություն և այլն:

3. Նախիջևանի Սեձ ուայուն. Ծավալվում է աղի, կապարի և ցինկի արդյունահանությունը. տեքստիլ (մետաքս), կաշվի, սննդի և պահածոների արդյունաբերություն:

### ԱՍԽՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԱՍԽՀ հողերը և վոռոգման պրոբլեմը: ԱՍԽՀ գյուղատնտեսություն (դաշտավարություն և անասնապահություն) հետամնաց ձևերը և ներկայումս նրանց մեջ կատարվող խոշոր տեղաշարժերը: Առաջին հնգամյակը և յերկրորդ հնգամյակի խրնդիրները: Խորհանտեսական և կոլտնտեսական շինարարությունը. մեքենատրակտորային կայանները, ԱՍԽՀ գյուղատնտեսական ճյուղերը և ուայունները:

1. Բամբակի ուայուն. Մերձկասպյան դաշտավայրերի չոր տափաստանները (Մուղանի, Շիրվանի, Ղարաբաղի): Արհեստական վոռոգման պահանջը: Ներկայումս այդ ուայունն արագ կերպով ընթանում է դեպի կիսաքոչվոր անասնապահություն, վորպես հետամնաց և սոց. պլանային տըն-

տեսություն խանդարող ձևի, լիկվիդացիան: Ռայունի 35 %-ը բռնված է բամբակի մշակությունը:

2. Հացահատիկային ուայուն. Աստրախան-Բազարի, Լենքորանի, Մասսալայի, Աստարայի, Գեյնյուկի, Ալի-Աբազի-Չուվանդի, Շամախու Գեվլի-ձի, Վարդաշենի, Աղսույի, Մարտունու (Լեոն. Ղարաբաղ), Չաֆարաբաղի Կարաբուլաղի շրջանները:

3. Խաղող-այգեգործական շրջանները. Խաչմասի, Կուբայի, Բազվի, Բելոկանի, Կախի, Գյանջայի, Որդուբաթի (Ն. Ի. ՍԽՀ) Կուբուկաշենի, Չուլֆայի (Ն. Ի. ՍԽՀ) շրջանները (մասամբ և Չաքաթալա): Այստեղ մշակվում են՝ սոյա, արախիս, ծխախոտ: Չբազվում են նաև շերամապահությունը:

4. Անասնապահական շրջանները. Գրավում են Մեծ Կովկասյան լեոնների հարավային լանջերը—Նուխին, Չաքաթալան, Շամախին և Կուբայի շրջանների լեոնային մասերը, Գուրգասանը և լեոնային Ղարաբաղը:

5. Մերձարևադարձային ուայուն. Թալիշի, մերձծովյան ափերը (Լենքորանի, Աստարայի շրջանները և Մասսալայի շրջանի մի մասը):

6. Մերձհաղաֆային տնտեսություններ. Բապու, Գյանջա, Նախիջևան և այլն:

### ԱՍԽՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Յերկաթուղային, անուելս, գետային, ծովային, ավտո և ավիատրանսպորտ: ԱՍԽՀ սոց. կուլտուրական շինարարությունն առաջին հնգամյակում և յերկրորդ հնգամյակում:

Աշխարհագրական դիրքը, սահմանները և կազմը (Աբխազիայի ԻՍՍՀ, Հյուսիսային Ոսեթիայի ԻՇ և Աջարստանի ԻՍՍՀ): Ֆիզիկո-աշխարհագրական տեսությունը: Բնակչությունը: Վրաստանն անցյալում վորպես Ռուսաստանի գաղութ: Վրաստանի ՍՍՀ-ի տնտեսության բուռն վերելքը խորհրդայնացումից հետո:

Վրաստանի արդյունաբերության բնութագիրը և նրա դինամիկան: Եներգետիկ և հանքային հարստություններն ու ջրերը: Ֆերկրորդ հնգամյակի ընթացքում ծավալվող արդյունաբ. կոմբինատ. ուսյունները:

1. Քուրախիս-Ռիոնի ֆիմիական մետալուրգիական կոմբինատ. Հենվում է Ռիոնի հիդրո-էլեկտրոցենտրալի և Տկվիրուլու քարածխի վրա: Ծավալվում է եներգո-արդյունաբերական կոմբինատ (Չեստաֆոն), վորն ընդգրկում է էլեկտրո-ձուլում, ֆերրոձուլում: Ծրագրվում է մետաղա-յին ալյումինի արտադրություն, սինթետիկ ամյակի, հանքային պարարտանյութերի, կոկս-բենզոլի, կարբիդի և ներկերի արտադրություն, արհեստական մետաքս-ձեթ-ոճառ և այլն: Թեթև և սննդի արդյունաբերություն (մահուղ, մետաքս, կոնսերվ և այլն):

Լեռնային արդյունաբերություն (մարգանեց, քարածուխ և կոմբին, բարիտ, մարմար, մկրնդեղ, մոլիբդեն և այլն): Չխտուրի և Տկվիրուլի Լեռնարդյունաբերությունը, Ինգուրի անտառաթղթային կոմբինատ:

2. Թիֆլիսի կոմպլեքս Գորու յեվ հարավ Ոսե-

քիայի յեմքառայուներով): Հենվում է Վրաստանի էլեկտրոցենտրալի վրա: Չարգանում է մետաղի արդյունաբերությունը, թեյի, գինու մետաքսի արդյունաբերության սարքավորման, շինարարութե-րի արտադրության ու ճանտրասային մեքենաշինարարությունը: Կառուցվում են նավթաթորման գործարաններ, զարգանում են քիմիա-Փարմացե-տական, փայտամշակման, տեքստիլ, կաշվի, սննդի, կահույքի արդյունաբերության ճյուղերը: Ֆեմենա, շաքար, կոնսերվ (Գորի), ցինկ, կապար, մարմար, փայտամշակում (Հարավ Ոսեթիա): Հիմնական մագիստրալ գծերի էլեկտրիֆիկացիա-լեռնանցքային յերկաթուղի:

3. Աբխազիայի կոմպլեքս տկվարչելիի մե-տալուրգիական կոմբինատի հետ միասին. Հենվում է Տկվարչելիի ջերմային էլեկտրոկայանի, Բզիբ-գետի և Կոզորգսեի վրա: Քարածխային, անտա-ռաթղթի, քիմիական, տեքստիլ, սննդի արդյունա-բերություն: Բարձր զարգացած կուրորտային տնտեսություն: Տկվարչելիի քարածխային մե-տալուրգիական (Ոչեմ չիրի կոմբինատ և Բզիբի ան-տառաթղթի կոմբինատ:

4. Աջարստանի արդ. ուսյուն. Բաթումի նավ-թաթորման գործարանները, կոչկեղենի արտա-դրություն: Սղոցարաններ: Փայտամշակման և կա-հույքի գործարաններ: Թեյի գործարաններ:

5. Շիրակի ուսյուն. Ծավալվում է նավթային արդյունաբերություն և պղնձի արտահանում:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՍԽՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Տեխնիկայես հետամնաց և տնտեսապես թույլ գյուղատնտեսությունն անցյալում: Խորը տեղաշարժեր ներկայումս (հացահատիկների և բարձր կուլտուրաների տեսակարար կշիռն անցյալում և ներկայումս), «կարչի յեզիպտացորենն Անդրկովկասից» (16-րդ համազումարում ընկ. Յակովլեվի գեկուցումից): Խորհանտեսական և կոլտնտեսական շինարարությունը և նրանց տեսակարար կրչիւը գյուղատնտեսության մեջ: Վրաստանի ՄՏԿ-ները: Վրաստանի ՍԽՀ գյուղատնտեսության ճյուղերը և նրանց ուսյունները:

1. Հացահատիկային մշակույթներ. Արևմտյան Վրաստանում՝ յեզիպտացորեն և Արևելյան Վրաստանում՝ ցորեն: Հացահատիկների տեսակարար կշիռն նվազումը և նրանց փոխարինումը բարձրը տեխնիկական մշակույթներով (թեյ և այլն):

2. Մերձարեվադարձային կուլտուրաներ. Թեյ, ծխախոտ, ցիտրուսային տունկեր, դեղատու, եֆիրաբեր, թելավոր (ռամի, կենաֆ) յուղաբեր (արախիս, սոյա) և այլ կուլտուրաներ: Մերձարևադարձային մշակույթների շրջանները՝ Աջարուտան, Արխազիա, Արևմտյան Վրաստանի շրջանները (Ոգուրգեթի, Զախատաուրի, Լանչխուտի, Աբաչի, Մարավելի, Սենակի, Զուգդիդի, Խոնի, Յալենջիկի և Վանի):

3. Այգեգործական խաղողամշակման ուսյուն. Արևելյան Վրաստանում՝ Գորու, Մուխրանի հովիտները, Կախեթիան: Արևմտյան Վրաստանում՝ Մամարերզի, Քուլթայիսի, Բաղդատի, Յագերի և Ռաչու շրջանները: Շերամապահություն:

4. Բամբակի ուսյուն. Կարալաղի դաշտ և Բորչալու:

5. Անասնապահական ուսյուն. Արխազիայի լեռնաստանը, Սվանեթիան, Արևմտյան Վրաստանի լեռները, հարավ Ոսեթիան, Կազբեկի ուսյունը, Փշավիան, Խելսուրեթիան, Թուչեթիան, Ախալցխան, Ախալքալաքի, Խուլի, և Կեդի շրջանները:

6. Մերձադարձային տնտեսություններ. Թիֆլիսի, Քուլթայիսի, Ճիատուրի, Բաթումի և այլ քաղաքների շուրջը:

## ՎՐԱՍՏԱՆԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ

Յերկաթուղիների ցանցը, յերկաթուղային շինարարությունը և ելեկտրիֆիկացիան: Անուխ, ավտո և ավիո տրանսպորտը: Ծովային և գետային տրանսպորտը:

Վրաստանի սոցիալ կուլտուրական շինարարությունը (նույն ծրագրով, ինչ ՀՍԽՀ-ի համանուն հատվածը):

## Գ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽՀ

Սահմանները, դիրքը, համառոտ ֆիզիկո-աշխարհագրական և պատմական տեսությունը: ՀՍԽՀ-ի դիմոգրաֆիան:

ՀՍԽՀ Ժող. տնտեսությունը. համառոտ պատմական ակնարկ: ՀՍԽՀ-ի հետամնաց ագրարային յերկրից ինդուստրիալ ագրարային յերկրի անցումը:

ՀՍԽՀ եներդետիկ և հանքային ռեսուրսները (պիտակ ածուխ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, պեմզա ցեմենտաքար, տուֆ, մարմար, կոնգլոմերատ, դիմաքար, քարածուխ, տորֆ, հանքային ջրեր և այլն):

## ՀՄԽ Հ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՄԽ Հ Արդյունաբերությունը պատերազմից առաջ, խորհրդայնացման նախորդակին, առաջին հնդամյակի սկզբին և վերջին: Արդյունաբերության առանձին ճյուղերը և նրանց զարգացումը: Յերկրորդ հնդամյակում արդյունաբերության զարգացման հեռանկարները: Ելեկտրիֆիկացիան և նրա դինամիկան: 1913.—1914 թ., առաջին հնդամյակի սկզբին և վերջին: Ելեկտրիֆիկացիան յերկրորդ հնդամյակում:

Յերկրորդ հնդամյակում ՀՄԽ Հ-ի արդյունաբերական կոմբինատ կենտրոնների ծավալումը:

1. Յերևան-Չանգու Եներգո-ֆիլիալական կոմբինատ.— Հենվում է Սևան-Չանգու-կասկադի հիդրոէլեկտրակայանների վրա: Ծավալվում են սինթետիկ կաուչուկի, կարբիդի, մետաղային ալյումինի, մետաղամշակման, տեքստիլի, շինանյութերի, մետաքսի, ցեմենտի (Դավալու), կաշվի, ձեթ-ոճառի, կոնսերվի, սննդի և համի արդյունաբերական ճյուղերը: Այս ուսյունի մեջ են մտնում Սարդարաբադի (ծրագրվող տեքստիլի 100,000 իլիկով, ձեթ-կոնսերվ) և Յելենովկայի (ձկնա-ոսլա-չիրա- և կաթ-նարդյունաբերության) յենթաուսյունները:

2. Ալլախվերդի-Ղարաֆիլիսայի ֆիլիալական-մետալուրգիական կոմբինատ. Հենվում է եներգետիկ և հումքային ֆակտորների փոխազդեցության վրա (Չորագես և պղնձի հանքավայրեր): Ելեկտրոքիմիական-մետալուրգիական կոմբինատ (պղնձի, ցին-

կի կապարի, ծծմբաթթվի, պղնձարջասպի, սուպերֆոսֆատի, ցիանամիդի, կարբիդի և այլն): Ֆլոտացիոն և պղնձաձուլման գործարաններ: Տանձուտի յենթաուսյուն՝ իր ծծմբային կալչեղանի հումքով: Այս ուսյունի մեջ են մտնում Լոռու և Դիլիջանի շրջաններն՝ իրենց խոշոր պանրագործարաններով, կաթնամշակությամբ և մրգի ու բանջարեղենի արդյունաբերությամբ:

3. Լեռնակալանի արդ. ուսյուն. Տեքստիլ արդյունաբերություն, մսի կոմբինատ, շաքարի գործարան, քարածխի (Ջաջուռ), շինանյութերի (տուֆ, պեմզա) վոչ հանքային հանածոների, սննդի և համի, ոճառի արդյունաբերություն:

4. Չանգեզուր Մեդրի արդ. ուսյուն. Պղնձի և մոլիբդենի (Նչպես Նաև ցինկի ու կապարի արդյունաբերություն: Ֆլոտացիոն և պղնձի ձուլման գործարանները: Կոնսերվի արդյունաբերություն: Ագարակի պղնձի և մոլիբդենի ուսյուն:

5. Տնայնագործություն: Տնայնագործության տեղն ու դերը ՀՄԽ Հ-ի ժող. տնտեսության մեջ: Նրա հետամնաց և քայքայված դրությունը ցարական և դաշնակցական կառավարության շրջանում: Տնայնագործության վերականգնումն ու զարգացումը խորհրդայնացումից հետո: Հիմնական ճյուղերը՝ գորգագործություն, տեքստիլ գործվածքներ և այլ ճյուղեր: Տնայնագործության արտելացումը, մեքենացումն ու արտադրանքի աճումը: Տնայնագործության զարգացման դինամիկան առաջին հնդամյակում և զարգացման հեռանկարները յերկրորդ հնդամյակում:

## ՀՄԽ Հ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսութեան սոցիալիստական վերահաստատումը: Իրրիգացիան: Կոլտնտեսական և խորհրդատեսական շինարարութիւնը: ՀՄԽ-ի ՄՏԿ-ները: Տրակտորային պարկի կարողութիւնը: Պարարտացում և բերքաավութեան բարձրացման խնդիրները: Տեխնիկական բույսերի տեսակարար կշռի արագ աճումը խորհրդայնացումից հետո, վոր նպաստում է ԽՍՀՄ-ի տնտեսական անկախութեանը:

ՀՄԽ-ի գյուղատնտեսական մշակույթներն ըստ շրջանների խմբավորման:

1. Դաշտավայրային բարձրարժեք տեխնիկական կուլտուրաների շրջաններ. Նախալեռնային շրջան (Ալլահվերդու, Իջևանի, Աշտարակի, Ղափանի և Մեղրու շրջանները): Այս շրջաններում զարգանում են նաև ծխախոտի, չերամի, խոզաբուծութեան և մեղվաբուծութեան ճյուղերը:

1. Դաշտավայրային բարձրարժեք տեխնիկական կուլտուրաների շրջաններ. Բամբակ, խաղող, քունջութ (Ղուրդուղուլու, Վաղարշապատի և Վեդու շրջանները):

2. Խաղող-այգեգործական և հացահատիկային շրջաններ, Նախալեռնային շրջան (Ալլահվերդու, Իջևանի, Աշտարակի, Ղափանի և Մեղրու շրջանները): այս շրջաններում զարգանում են նաև չերամի, խոզաբուծութեան և մեղվաբուծութեան ճյուղերը:

3. Դաշտավայրական-հացահատիկային շրջաններ.— (Ախտայի, Բասարգեչարի, Լենինականի, Կոտայքի, Քեչիչքենդի, մասամբ Գորիսի շրջանները):

ըր): Շրջաններից մի քանիսում զարգանում են անասնապահական, այգեգործական և ծխախոտի տնտեսութիւնները:

4. Անասնապահական շրջաններ. Լեռնային գոտի (Աղբարայի, Ղարաքիլիսայի, Աբարանի, Գորիսի, Փաշալուի, Իլիլիանի, Թալինի, Մարտունու, Նոր-Բայազետի, Շամշադինի, Սիսիանի և Ստեփանավանի շրջանները): Վորոշ տեղերում զարգացել են նաև ծխախոտի, հացահատիկների, չերամապահութեան և մեղվաբուծութեան ճյուղերը:

5. Զինորսութիւն յե՛վ վարսորդութիւն. Լճային (Սևան) ձկնորսութեան զարգացումը ՀՄԽ-ում: Զինորսութեան քայքայված դրութիւնը մինչ հեղափոխութեան շրջանում, նրա զարգացման դինամիկան առաջին հնգամյակում և յերկրորդ հնգամյակի զարգացման ուղիները:

Վարսորդութիւնը և նրա զարգացման հեռանկարները:

ՀՄԽ գյուղատնտեսութեան տեխնիկայի և պաշտավարութեան ձևերի զարգացումը:

ՀՄԽ-ի գյուղատնտեսութեան զարգացման հեռանկարները և խնդիրները յերկրորդ հնգամյակում:

## ՏՐԱՆՍԳՈՐԾԸ

Ճանապարհները (յերկաթուղի, խճուղի, գլորունտային). ճանապարհային շինարարութիւնը յերկրորդ հնգամյակում: Ավտո, ավիո և լճային տրանսպորտ:

## ՍՈՑԻԱԼ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Լուսավորության, առողջապահության և սոցիալիստական կենցաղը հեղափոխությունից առաջ. հետհոկտեմբերյան նվաճումները և յերկրորդ հնգամյակի հեռանկարները:

### ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

ԱՍՖԽՀ-ի տեղը ԽՍՀՄ-ի ժող. տնտեսության մեջ:

ԱՍՖԽՀ-ի ժող. տնտեսության բուռն վերելքը փորպես լուսավորչն ցուցանիչ լենինյան՝ ազգային քաղաքականության: ԱՍՖԽՀ-ի բազմազգի ժողովուրդների յեղբայրական համագործակցությունը՝ «Զտեսնված բուրժուազիայի որով և անհնարին՝ բուրժուական իրավակարգում» (ԼԵՆԻՆ):

Առաջին հնգամյակի նվաճումները: Յերկրորդ հնգամյակում ժող. տնտեսության բուռն վերելքը ԱՍՖԽՀ դարձնելու յե ԽՍՀՄ-ի ամենաձաղկած ինդուստրիալ ույոններից մեկը և Մերձավոր Արևելքի անպարտելի Փորպոսար:

### ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՅՑՈՒՐՆԵՐ

1. А.Ф. Ляйстер и Г.Ф. Чурсин—«География Закавказья»
2. Госплан ЗСФСР. «Материлы ко второй пияатилетке ЗСФСР.»
3. Сборник «ЗСФСР. Персия, Турция»
4. Առանձին հանրապետությունների 1932, 1933 և 1934 թ. ժող տնտեսության պլանները (պարբերական մամուլից և համապատասխան երասարակություններ):
5. Կուս համադումարների և Կուսական մամուլի և Գիտական—տնտեսագիտական ամսագրերի նյութերը:



Հայաստանի Ազգային գրադարան



NL0427463

361

ԳԻՆԸ 50 Կ.



ПРОГРАММА  
ПО ГЕОГРАФИИ  
Для VII групп средних школ  
ЗАКАВКАЗЬЕ  
из ССР Армении, 1934 г., Эривань

9

20404